Արձանագրություն 8

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ԳՀԱՊՁԲ-17/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.01.2018թ. ժամը 17:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Վարդանյան - ՏՏԵՆՀՎ վարչության պետի տեղակալ ԳՊ/ԳԱՊ

Անդամներ

Վ. Մուրադյան – ՏՏԵՆՀՎ վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա. Հովսեփյան - ՏՏԵՆՀՎ վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Տ. Գալոյան - ՏՏԵՆՀՎ վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու ԳՊ/ԲԱ

Ա. Գրիգորյան - ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի տնտեսագետ

<u>Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ</u>

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի դրական եզրակացության համաձայն «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի և «ԻՆԿՐԻՊՏ» ՍՊԸ-ի ներկայացված տվյալները համապատասխանել են իրականությանը:

2. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի և «ԻՆԿՐԻՊՏ» ՍՊԸ-ի ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և ապրանքի անվանումներն ու տեխնիկական բնութագրերը ընդունելի են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5-րդ չափաբաժնի մասով (Տպիչ սարք, լազերային, A4) առաջարկված տեխնիկական բնութագիրը ընդունելի չէ, քանի որ մասնակցի առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին՝ ըստ հրավերի տպման կետայնությունը պետք է լինի 1200 x 1200 dpi, այնինչ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առաջարկվում է 4800 x 600 dpi:

4. «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով

սահմանված պահանջներին,քանի որ ապրանքների մատակարարումը չի իրականացվել պայմանագրով նախատեսված ժամկետներում:

3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով (համակարգիչ ամբողջը մեկում) առաջարկված տեխնիկական բնութագրերը ընդունելի չեն, քանի որ մասնակցի առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին՝ հրավերով սահմանված է,որ համակարգիչները պետք է ունենան առնվազն 4 հատ USB բնիկ, որից 2 հատը USB 3.0 կողքից, այնինչ մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրում առաջարկվում է համակարգիչ,որն ունի 5 USB բնիկ,որից միայն 1-ն է կողքից:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի ահանջներին բավարարող մեկ այլ նմանատիպ պայմանագիր:
2. Ծանուցել ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով նոր տեխնիկական բնութագրեր (հրավերով սահմանված պահանջներին համապատասխան)
3. Ծանուցել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 5-րդ չափաբաժնի մասով նոր տեխնիկական բնութագիր: (հրավերով սահմանված պահանջներին համապատասխան)

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

1. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ ԳՀԱՊՁԲ-17/17 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել որակավորման փաստաթղթերի ստացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Վարդանյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մուրադյան

_____ Ա. Հովսեփյան

_____ Տ. Գալոյան

_____ Ա. Գրիգորյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

Արձանագրություն 9

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ԳՀԱՊՁԲ-17/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.01.2018թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Վարդանյան - ՏՏԵՆՀՎ վարչության պետի տեղակալ ԳՊ/ԳԱՊ

Անդամներ

Վ. Մուրադյան – ՏՏԵՆՀՎ վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա. Հովսեփյան - ՏՏԵՆՀՎ վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Տ. Գալոյան - ՏՏԵՆՀՎ վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատու ԳՊ/ԲԱ

Ա. Գրիգորյան - ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի տնտեսագետ

1. **Տեղեկություններ որակավորման փաստաթղթերի վերաբերյալ**

1. «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել է առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով հրավերի պահանջներին համապատասխան որակավորման փաստաթղթեր և 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով նոր տեխնիկական բնութագրեր:
2. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն ն 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել է առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով 5-րդ չափաբաժնի մասով նոր տեխնիկական բնութագիր:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին:
2. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 2-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

3. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 3-րդ,4-րդ,6-րդ,8-րդ,9-րդ,11-րդ,12-րդ,15-րդ,16-րդ,17-րդ չափաբաժինների մասով «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին:
4. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 5-րդ չափաբաժնի մասով «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին:
5. Ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով «ԻՆԿՐԻՊՏ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակիցների հետ գնումների մասին << օրենսդրության պահանջների համաձայն անգործության ժամկետի լրանալուց հետո՝ 24.01.2018թ-ից հետո կնքվելու են գնման պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Վարդանյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մուրադյան

_____ Ա. Հովսեփյան

_____ Տ. Գալոյան

_____ Ա. Գրիգորյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան